

Ն Ա Ի Ա Ս Ա Ր Ռ Գ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Բ. ՏԱՐԻ

ԹԻՒ 1(13)

ՕԳՈՍՏՈՍ 2003

ՄՊԱՍԵԼՈՎ ՆՈՐ ԵՂԱՆԱԿԻՆ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանության նոր եղանակին ազդանշանը կը մօտենայ, եւ բոլոր խումբերը արդէն իսկ պատրաստութեան մէջ են:

Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Մ.Մ. վերադարձած են Ա. դասակարգ եւ բնականաբար իրենց կարգին իրենց կազմերը վերադասաւորելու հոլովոյթին մէջ են:

Ժիշո է, որ արհեստավարժութեան մէջ ամէն բանէ առաջ դրամն է «խօսող»ը, իսկ այս պարագային բոլորին ծանօթ է հայկական խումբերուն պարզած վիճակը այդ իմաստով, այսուհանդերձ մենք ունինք յատկութիւն մը, առաւելութիւն մը, որ կը տարբերէ մեզ ուրիշներէն:

Այդ յատկութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մեր միութենական հասկացողութիւնը: Թէեւ շատեր կը խորհին, որ այսուհետեւ կարելի չէ շարունակել միութենական մօտեցումներով, որովհետեւ մարզաշխարհը լրիւ «պիզնըս»ի վերածուած է, սակայն այդքան ալ հիմնաւորած տեսութիւն մը չէ այդ մէկը: Այո՛, որոշ իրողութիւն մը կայ ըստածին մէջ, բայց երբեք ընդունելի չէ վերջնական գիծ մը քաշել միութենական ըմբռնումներուն վրայէն, մանաւանդ մեզի՝ Հ.Մ.Ը.Մ.ականներու համար: Որքան կ'ուզէ աշխարհ թող կերպարանափոխուի, մենք կը շարունակենք հաւատալ, որ Հ.Մ.Ը.Մ. ամէն բանէ առաջ միութենական հասկացողութեամբ կը գործէ բոլոր մարզերուն մէջ, նա՛եւ ֆուտբոլի: Թերեւս կան որոշ անպատեհութիւններ, բայց կը նախընտրենք այդ անպատեհութիւնները, քան՝ սոսկական «պիզնըս» հասկացողութիւնը, որ մարդը, ֆուտբոլիստը կը վերածէ ռոպոթի: Կարելի չէ ֆուտբոլի խումբի մը մէջ միայն «առուծախ»ով առաջնորդուիլ, այնքան ատեն որ հայկական խումբ ենք, յստակ առաքելութիւն ունեցող միութիւն ենք, Լիբանանի մէջ ենք, ուր ուզենք կամ ոչ՝ հասայնքային դիմագիծի պահպանման առումով եւս հարկադրուած ենք մօտենալու հարցին: Ի վերջոյ մեր համակիրներուն ջախջախիչ տոկոսը դաշտ կ'երթայ ոչ թէ պարզապէս ֆուտբոլ դիտելու, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ու անոր շապիկին սիրոյն:

Ահա այս մտորումներով կը պատրաստուինք նոր եղանակին եւ այս հասկացողութեամբ պէտք է մօտենալ հարցին, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեան, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին:

«ՆԱԲԱՍԱՐԴ»Ի ԶՐՈՅՅԸ՝ ԱՇԽԱՐՀԱՏՈՒՉԱԿ ՄԱՐԶԻՉ ՌԵՄՈՆ ԶԱՐՓԱՆԷԼԵԱՆԻ (ԶԱՐՓԱ) ՆԵՏ



Զարփա Ռոմէ Լըմէրի եւ Ժան Քլոտ Լաֆարկի միջեւ:

Յուլիսի վերջերը Լիբանան ժամանեց ֆրանսահայ աշխարհահռչակ մարզիչ, Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիոնին մէջ 200 միջազգային մարզիչներու ընդհանուր պատասխանատու Ռեմոն Զարփանէլեան, որ առաւել ծանօթ է «Զարփա» անունով:

Շար.ը՝ էջ 8

100ՐԴ ԹՈՒՐ ՏԸ ՖՐԱՆՍԸ ԿԸ ՏՊԱՒՈՐԷ



Շուենլէ՛ էջ 4

ՕԼԻՄՓԻՔ ԻՐԱԳՈՐԾԵՑ ՏՈՒՊԼԷՆ

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան տիրանալէն 2 շաբաթ ետք, 5 Յուլիս 2003ին, Օլիմպիք շահեցաւ նաեւ Լիբանանի ֆուտբոլի բաժակը, իրագործելով տուպլէ մը, աւարտական մրցումին 3 - 2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նըժմէն, յետ երկարաձգումի:



Մրցումը կայացաւ Մարզական Աւանին մէջ, 15 հազար համակիրներու ներկայութեան: Մրցումին ներկայ էր նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան:

Մրցումը սկսաւ հանդարտ: 2 խումբերը աւելի պաշտպանողական խաղ կը կիրարկէին: Ամենաստույգ առիթը ներկայացաւ Նըժմէի 91րդ կորսուած վայրկեաններուն, երբ Սաիտ Ապպուշէի հարուածը զսպունգաւ բերդին սիւնին կողմէ:

Մրցումին 90 վայրկեանները աւարտեցան 0 - 0 արդիւնքով:

Երկարաձգման Ա. կիսախաղի Ա. վայրկեանին, Մոհամէտ Ռըտա (Օլիմպիք) սխալմամբ իր բերդէն ներս նշանակեց Նըժմէի առաջին կոլը: 100րդ վայրկեանին, այս անգամ Նըժմէի նիւթերի մարզիկ Սանտայ Օքո, իր բերդէն ներս կոլ մը նշանակելով, արդիւնքը հաւասարեցուց:

108րդ վայրկեանին, Օլիմպիք նշանակեց իր 2րդ կոլը, շնորհիւ պրազիլցի Սիլվիո Սեզար Փիրերայի: Պատասխանը չուշացաւ: Հազիւ 3 վայրկեան ետք, Նըժմէ, Մոհամէտ Հալաուիի գլխու հարուածով արդիւնքը հաւասարեցուց:

Օլիմպիքի փրկարարը հանդիսացաւ դարձեալ Սիլվի Սեզար Փիրե-

րա, որ 114րդ վայրկեանին նշանակեց իր խումբին յաղթանակի կոլը, փոխանցում մը ստանալէ ետք Հտիլսըն Խոսէ Տա Սիլվայէն:

Նշենք, թէ այս մրցումը ղեկավարելու համար, Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը Աւստրիայէն հրաւիրած էր իրաւարարները:

Մրցումի աւարտին, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան Լիբանանի ֆուտբոլի բաժակը յանձնեց Օլիմպիքի խմբապետ Փիեռ Իսային:

Ստորեւ՝ Լիբանանի ֆուտբոլի բաժակը շահած խումբերը.

- 1937-1938 Նահտա
- 1938-1939 Հըլմի Սփոր
- 1939-1940 Հըլմի Սփոր
- 1940-1941 Նահտա
- 1942-1943 Հ.Մ.Ը.Մ.
- 1944-1945 Նահտա
- 1946-1947 Նահտա
- 1947-1948 Հ.Մ.Ը.Մ.
- 1949-1950 Շապիպէ Մազրաա
- 1950-1951 Շապիպէ Մազրաա
- 1961-1962 Հ.Մ.Ը.Մ.
- 1963-1964 Սաֆա
- 1970-1971 Նըժմէ
- 1985-1986 Սաֆա
- 1986-1987 Նըժմէ
- 1987-1988 Անսար
- 1988-1989 Նըժմէ
- 1989-1990 Անսար
- 1990-1991 Անսար
- 1991-1992 Անսար
- 1992-1993 Պըրժ
- 1993-1994 Անսար
- 1994-1995 Անսար
- 1995-1996 Անսար
- 1996-1997 Նըժմէ
- 1997-1998 Նըժմէ
- 1998-1999 Անսար
- 1999-2000 Շապապ Սահէլ
- 2000-2001 Թատամոն Սուր (հետագային ջնջուած)
- 2001-2002 Անսար
- 2002-2003 Օլիմպիք

«ՄԱՐԼՊՈՐՈ ՌԷԼԻ»Ն ԱԲԱՐՏԵՑԱԿ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ



4էն 6 Յուլիս 2003ին, Լիբանանի մէջ կայացաւ «Մարլպորո Ռելի»-ն, որ կը նկատուի Միջին Արեւելքի ռելիներուն 2րդ հանգրուանը:

Այս մրցաշարքին մեծագոյն բացականերն էին Մոհամէտ Պըն Սլայէմ (Ա. Մ. Է.), որ չորս անգամ տիրացած է տիտղոսին (1987, 1991, 1998 եւ 1999) եւ անցեալ տարուան ախոյեան Ժան Փիեռ Նասրալլա (Լիբանան): Ան նախապէս երկու անգամ (1995 եւ 1997) շահած է այս մրցաշարքը:

Մրցումը ընթացաւ եւ վերջ գտաւ ամբողջութեամբ լիբանանցի վարորդներու տիրապետութեամբ, որոնք գրաւեցին մրցաշարքին առաջին վեց դիրքերը:

Մրցաշարքը շահեցաւ Ռոժէ Ֆեղալի (Սուպարո Իմփրեզա), որ մրցումը աւարտեց 2 ժամ 46 վայրկեան եւ 07 երկվայրկեանէն: Ան 2րդ

անգամ ըլլալով կը տիրանար այս տիտղոսին (առաջինը՝ 2000ին):

Ռոժէ Ֆեղալի օգտուեցաւ նաեւ սէլուոցի Ապտալլա Պեխաշապի (Փէօժօ 206) եւ քաթարցի Նասէր Աթիէի (Սուպարո Իմփրեզա) բացակայութենէն, որոնք մրցաշարքի առաջին իսկ հանգրուանին չշարունակեցին մրցաշարքը, ինքնաշարժի խանգարումի հետեւանքով:

2րդ հանդիսացաւ Ռոժէ Ֆեղալիի եղբայրը՝ Ապտո Ֆեղալի, իսկ երրորդ՝ Ռոտրիք Ալ Ռաաի:

Ստորեւ՝ Լիբանանի «Մարլպորո Ռելի»-ին վերջնական դասաւորումը.

- 1.- Ռոժէ Ֆեղալի (Լիբանան, Սուպարո Իմփրեզա)
- 2.- Ապտո Ֆեղալի (Լիբանան, Թոյթա քորոլա)
- 3.- Ռոտրիք Ալ Ռաաի (Լիբանան - Լանսիա Տելթա)
- 4.- Մարքօ (Լիբանան, Կոլֆ Ծի. Թի. Այ.)
- 5.- Միշէլ Սալէն (Լիբանան, Թոյթա Սելիքա)
- 6.- Ֆիլիպ Քազան (Լիբանան, Հոնտա Սիվիք)
- 7.- Ապտալլա Քասիմի (Ա. Մ. Է., Միթսուպիշի լանսըր)
- 8.- Իլէն Խուամ (Լիբանան, Միթսուպիշի լանսըր)
- 9.- Էլի Ժըրմանի (Լիբանան, Լանսիա տելթա)
- 10. Խալէտ Քասսեմի (Ա. Մ. Է., Միթսուպիշի լանսըր)

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

■ ՀԱՅԱՍՏԱՆԻ նախկին բնօրինակ Արտիոմ Սիմոնյան 54 թվ. դասակարգին մեջ պարտության մատնելով մեքսիքացի Քարլոս Փոնթերային տիրացաւ Միացեալ Նահանգներու ախոյեանի տիտղոսին: Նշենք, որ Սիմոնյանի մրցակիցը արհեստավարժ բնօրինակ մըն էր:

■ ՀԱՅԱՍՏԱՆԻ ծանրաբարձութեան ֆետերասիոնի նախագահ Օգսէն Միրզոյեանի համաձայն, հայրենի ծանրաբարձները կը պատրաստուին յառաջիկայ ամիսներուն տեղի ունենալիք միջազգային երկու մրցաշարքերու:

Ողիմպիականի նախկին ախոյեան Միրզոյեան ըսաւ, որ առաջին միջազգային մրցաշարքը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 16 Օգոստոսին, երբ Գերմանիոյ մէջ սկսի Երոպայի պատանիներու ախոյեանութեան մրցաշարքը, իսկ երկրորդը՝ յառաջիկայ Նոյեմբերին Քանատայի մէջ տեղի ունենալիք աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին:

Ան ըսաւ, որ հայրենի կազմերը պիտի յստականան յառաջիկային, երբ ուսումնամարզական հաւաքները աւարտին:

■ ՅԱՌԱՋԻԿԱՅ 16ԷՆ 25 Օգոստոս Քալիֆորնիոյ մէջ (Մ. Ն.) տեղի պիտի ունենան աշխարհի մարմնամարզի ախոյեանութեան մրցումները, որոնց իր մասնակցութիւնը պիտի բերէ նաեւ Հայաստան: Հայաստանի հաւաքականին մաս կը կազմեն Վահագն Ստեփանեան, Արտիոմ Աւետիսեան եւ Յարութիւն Մերտիսեան:

■ ՔԱՐԱՄԵԱՆ ԵՂԱՅՐՆԵՐ ՄԻԱՅԱՆ ՔԻԵՒԻ ԱՐՍԵՆԱԼԻՆ Հայաստանի ֆութպոլի ազգային խումբին մաս կազմող միջազգային յառաջապահներ՝ Արման եւ Արտաւազդ Քարամեաններ, երկու տարուան համաձայնագիր ստորագրեցին Քիւեի Արսենալ խումբին հետ:

Ինչ կը վերաբերի Միքա Աշտարակի մարզիկ Արամ Ոսկանեանի, կ'ակնկալուի, որ ան փոխանցուի Քալիֆորնիայի Պալմօքս խումբին:

«ՉԷՄՓԻՐՆՉ ԼԻԿ»Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՅԱՇԱՐՔ ՓԻՆԻԿ ԵՐԵՒԱՆ ԱՆՑԱԻ Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆ

«Չէմփիրնչ Լիկ»ի 2003-2004 եղանակի գտումի Ա. հանգրուանի երթի մրցումներուն, Հայաստանի ախոյեան եւ բաժակակիր Փինիկ Երեւան Հանրապետական մարզադաշտին վրայ հիւրընկալեց Իսլանտայի Ռէյքիաւիքը եւ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց անոր դէմ:



Նշենք, որ մեծաթիւ համակիրներու ներկայութեան հայրենի ֆութպոլիստները տիրական ներկայութիւն էին դաշտին վրայ եւ արժանի՝ յաղթանակին: Փինիկ Երեւան չկրցաւ իր նպատակին հասցնել փեմալթի մը:

Բ. հանգրուան հասնելու պարագային անոնք իրենց դէմ պիտի ունենան Սոֆիայի Բանակայինները (Պուլկարիա):

«Չէմփիրնչ Լիկ»ի ֆութպոլի մրցաշարքին գտումի Ա. հանգրուանի դարձի մրցումներուն, Հայաստանի ախոյեան Փինիկ Երեւան 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք իսլանտական Ռէյքիաւիք խումբին հետ, ապահովեց Բ. հանգրուանին իր տոմսը:

Ռէյքիաւիքի մէջ տեղի ունեցած մրցումին, Փինիկ Ա. կիսախաղը 0-0 արդիւնքով հաւասարութեամբ աւարտելէ ետք, 73րդ վայրկեանին Ադուան Մկրտչեան բացաւ մրցումին հաշիւը: Դաշտին տէրերը 81րդ վայրկեանին (փեմալթով) շնորհիւ Պիարկի Կունյաուկսընի նշանակած կոլին թէւ նշանակեցին իրենց հաւասարութեան կոլը, սակայն այդ մէկը բաւարար չեղաւ, որ անոնք անցնին Բ. հանգրուան:

«Չէմփիրնչ Լիկ»ի ֆութպոլի մրցաշարքին գտումի Բ. հանգրուանի երթի մրցումներուն, Հայաստանի ներկայացուցիչ Փինիկ Երեւան Երեւանի մէջ 2-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Սոֆիայի Բանակայիններէն (Պուլկարիա): Հիւր կազմը իւրաքանչիւր կիսախաղի ընթացքին յաջողեցաւ ցնցել հայկական կազմին բերդին ուռկանը, առաջին անգամ շնորհիւ Եանչեւի (19րդ), իսկ երկրորդը՝ Մուկասիի (46րդ):

Հակառակ անոր որ տակաւին հայկական կազմը յառաջիկայ Օգոստոս 6ին դարձի մրցում մը ունի կատարելիք Պուլկարիոյ մէջ, սակայն անոր առաքելութիւնը կը մնայ քիչ մը դժուար, նկատի ունենալով, որ Գ. հանգրուան հասնելու համար Փինիկ պէտք ունի առնուազն երեք կոլի:

ԿՈՓՍՄԱՐՏ

ՍԱՄՈՒԷԼ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ՝ ԱՆՈՅԵԱՆ

Ֆրանքֆորթի մէջ (Գերմանիա) տեղի ունեցած կոփամարտի երիտասարդներու միջազգային մրցաշարքին աւարտին, պատանիներու աշխարհի ախոյեանութեան արծաթէ եւ Երոպայի ախոյեանութեան պրոնզէ մետալակիր Սամուէլ Մաթեոսեան հանդիսացաւ 69 թվ. դասակարգի ախոյեան:

Ան իր կատարած չորս մրցումներուն ալ յաղթանակ արձանագրեց, յաջորդաբար պարտութեան մատնելով գերմանացի, հունգարացի (նաքաութով), ֆրանսացի (կիսաւարտական) եւ անգլիացի (աւարտական) իր մրցակիցները:

Մաթեոսեանի մարզիչը՝ Գէորգ Միսաքեան գովասանքով արտայայտուեցաւ անոր այս իրագործումին մասին, ըսելով, որ միջազգային մրցաշարքի մը ընթացքին ան առաջին անգամ ըլլալով է, որ ախոյեան կը հանդիսանայ:

100ՐԴ ԹՈՒՐ ՏԸ ՖՐԱՆՍԵ ԿԸ ՏՊԱՒՈՐԷ

Հեծելարշալի աշխարհի ամենէն հանրաժանօթ եւ կարեւոր շրջավազքը նկատուող *Թուր Տը Ֆրանսը* այս տարի սկսաւ 5 Յուլիսին եւ մինչեւ 27 Յուլիս երկարելով՝ չափազանց հետաքրքրական, հաճելի եւ խանդավառ պահեր շնորհեց մարզաձեւին եւ մասնատրաքար այս շրջավազքին սիրահարներուն, որովհետեւ անհկա սուր մրցակցութեան շնորհիւ բոլոր ժամանակներէն շատ աւելի կախարդական եւ հետաքրքրական եղաւ:

Արդ, այս տարուան *Թուր Տը Ֆրանսը* եղաւ յատկանշական քանի մը պատճառներով: Առաջին հերթին, շրջավազքը, որ առաջին անգամ տեղի ունեցած է 1903ին եւ աւարտած ֆրանսացի Մ. Կարիճի յաղթանակով, այս տարի կը տօնէր իր 100րդ տարեդարձը եւ այս մէկուն իբր արդիւնք ֆրանսացի կազմակերպիչները մեծ ջանք թափած էին շրջավազքը լաւագոյն ձեւով կազմակերպելու համար եւ նախկին բաժակակիրներ, դերասաններ ու աշխարհահռչակ դէմքեր մէկտեղելով փորձած էին լուսարձակները կեդրոնացնել այս տարուան պատմական *Թուր Տը Ֆրանս*ին վրայ: Փաստօրէ՛ն, կազմակերպիչները յաջողեցան իրենց առաքելութեան մէջ, բայց պէտք չէ մոռնալ, թէ այս տարուան շրջավազքը հետաքրքրական դարձնող կարեւորագոյն կէտը այն էր, թէ ամերիկացի հեծելանորդ Լէնս Արմսթրոնկ կը գտնուէր հսկաներ՝ Միկել Ինտուրայնի (Սպանիա), Պերնար Հիմոյի (Ֆրանսա), Էտի Մերքսի (Պելճիքա) եւ Ժաք Անքէթիլի (Ֆրանսա) հաստատած *Թուր Տը Ֆրանս*ի մրցանիշներուն հաւասարելու սեմին: Այս չորս հեծելանորդներէն իրաքանչիւրը *Թուր Տը Ֆրանս*ին տիրացած է 5 անգամ եւ աւելի՛ն Միկել Ինտուրայն յաջողած է այդ մէկը իրագործել 5 յաջորդական տարիներու ընթացքին, իսկ նախապէս քաղցկեղէ տառապած ամերիկացի Լէնս Արմսթրոնկ այս տարի Ինտուրայնի մրցանիշին հաւասարելու առիթը ունէր նկատի ունենալով, որ ան վերջին չորս տարիներուն քաղցկեղը յաղթահարելէ ետք իր մօտ պահած էր *Թուր Տը Ֆրանս*ին տիրոջը:

Այս մէկը ի մտի ունենալով կարելի է արդէն պատկերացնել շրջավազքին տիրած խանդավառ մթնոլորտը, որ աւելի եւս «տաքցաւ» երբ բացման հանգրուանէն իսկ Արմսթրոնկ դժուարութեան առջեւ գտնուեցաւ եւ սուր մրցակցութեան հանդիպելով գրաւեց 7րդ դիրքը եւ չկրցաւ շուտով դեղին շապիկը ձեռք անցընել: Բացումէն ետք, առաջին հանգրուանը եղաւ աղէտալի, որովհետեւ մրցումին աւարտին մէկ քիլոմէթր մնացած արկածի մը հետեւանքով մեծ թիւով հեծելանորդներ իրար բախեցան եւ ամերիկացի Լէվի Լայփհայմըրը գիտօր վիրաւորելով եղաւ առաջին թուրը կիսատ ձգող հեծելանորդը, մինչ այլ ամերիկացի մը՝ Թայլըր Հէմիլթընն անոյն արկածին հետեւանքով ուսը վիրաւորեց, բայց եւ այնպէս դանիական Սի.ԷՍ.ՍԻ. խումբին մաս կազմող Հէմիլթընն որոշեց շարունակել *Թուր*ը եւ վիրաւոր վիճակով հանգրուանի մըն ալ տիրացաւ ու բաւական լաւ արդիւնք արձանագրեց երբ ընդհանուր դասաւորման 4րդ պատուաբեր դիրքը գրաւեց: Յատկանշական էր իտալացի Ալե-



սանտո՞ Փէթաքիի ելոյթը, որ 4 հանգրուան «գրպանելէ» ետք 7րդ հանգրուանին անակնկալօրէն քաշուեցաւ շրջավազքէն: Եօթներորդ հանգրուանին յաղթականը եղաւ լեոներու հսկան՝ ֆրանսացի Ռիշար Վիրէնք, որ օրուան մը համար դեղին շապիկը հագուեցաւ զայն խլելով ԵՈՒ. ԷՍ. ՓՈՍԹԸԼԻ քոլոմպիացի հեծելանորդ՝ Վիքթոր Հիլօ Փենայէն: Վիրէնք շրջավազքի աւարտին հագուեցաւ կէտաւոր շապիկը, որովհետեւ լեոնային դասաւորման պարագլուխի դիրքը գրաւեց գերազանցելով յաջորդաբար՝ Տիֆոն եւ Արմսթրոնկը: Այս հանգրուանէն ետք, Արմսթրոնկ վերջապէս տիրացաւ դեղին շապիկին եւ մեծ դժուարութեամբ զայն իր մօտ պահեց մինչեւ շրջավազքին աւարտը, երբ հասնելով Փարիզ իր անունը արձանագրեց *Թուր Տը Ֆրանս*ի պատմութեան տոմարներուն մէջ եւ հաւասարեցաւ Ինտուրայնի մրցանիշին:



Արմսթրոնկ շրջավազքին աւարտին յայտարարեց, թէ այս տարուան *Թուր*ը նախորդ չորսէն շատ աւելի դժուար էր եւ ինք առաջին քանի մը հանգրուաններուն գրեթէ յոյս չունէր մնան իրագործում մը կատարելու: Արդ, Արմսթրոնկ 20 հանգրուաններուն ընթացքին 2 անգամ «տապալեցաւ» իր հեծելանիւնէն եւ անգամ մըն ալ ստիպուած եղաւ ճամբէն դուրս գալով չորցած խոտերու վրայէն սահելու՝ խուսափելու համար վտանգաւոր արկածէ մը: Աւելի՛ն, ան շրջավազքին նախօրեակին անհանգիստ էր եւ առաջին հանգրուաններուն ընթացքին շուքի տակ մնալէ ետք չկրցաւ փայլիլ նաեւ իր նախասիրած Ալպեան հանգրուաններուն ընթացքին, ինչ որ մեծապէս վտանգեց իր դիրքը: Ան միայն 15րդ հանգրուանին է, որ վերագտաւ իր երբեմնի բարձրութիւնը



Եւ հանդիսատեսի մը պատճառով փոքր արկած մը ունենալէ ետք, վերադարձաւ եւ Փիրէնէի լեռներուն վրայ տեղի ունեցող այդ հանգրուանին տիրանալով՝ ամրապնդեց ընդհանուր դասատրման մէջ իր պարագլուխի դիրքը: Նշենք, թէ այս տարի առաջին անգամ ըլլալով շրջավազքին աւարտին իր անմիջական մրցակիցներուն վրայ Արմսթրոնկի ունեցած տարբերութիւնը 6 վայրկեանէն պակաս էր նկատի ունենալով, որ Արմսթրոնկ 1'01" տարբերութեամբ մը միայն գերազանցեց 97ի տիտղոսակիր գերմանացի Եան Ուրիշը, որ 5րդ անգամ ըլլալով հանդիսացաւ 2րդ: Յիշատակի արժանի է նաեւ այն կէտը, թէ Արմսթրոնկ հակառակ 2 անգամ արկածի հանդիպելուն, բախտաւոր եղաւ այդ կողմանէ, որովհետեւ անոր երկու անմիջական մրցակիցներն ալ իրմէ հեռու մնացին արկածներու հետեւանքով: Առաջին հերթին, սպանացի Խոսեպա Պելոքի, որ Արմսթրոնկի ետին 2րդ դիրքը կը գրաւէր, 9րդ հանգրուանին արկածի մը հանդիպեցաւ եւ հիւանդանոց փոխադրուելով դուրս մնաց շրջավազքէն, մինչ Եան Ուրիշ, որ մեծ յոյս ուներ 19րդ եւ նախավերջին հանգրուանին Արմսթրոնկէն խլելու դերին շապիկը եւ տիրանալու իր 2րդ *Թուր Տը Ֆրանսի* տիտղոսին՝ եղաւ անբախտ, երբ անոր հեծելանիւնին անիւները սահեցան եւ ան գետին իյնալով ամէն յոյս կորսնցուց, մինչ Արմսթրոնկ, որ քանի մը երկվայրկեան աւելի ուշ էր, լսելով Ուրիշի արկածին մասին՝ դանդաղեցաւ եւ ազատեցաւ միեւնոյն ճակատագիրին ենթարկուելէ:

Շաբաթ օրուան ժամացոյցի դէմ անհատական եւ նախավերջին հանգրուան

նին աւարտին, երբ գրեթէ յստակացաւ Արմսթրոնկի յաղթանակը, Պերմար Հիսօ Արմսթրոնկը դրուատեց եւ *փոտիուսին* վրայ անոր դիմաւորեց «Բարի եկար մեր ակումբէն ներս» նախադասութեամբ, իսկ Արմսթրոնկ աւելի ուշ մեծ ուրախութիւն յայտնեց Հիսոյի գեղեցիկ վերաբերմունքին համար: Արմսթրոնկ աւելի ուշ իր այս տարուան դժուար յաղթանակը վերագրեց իր նախորդ 4 բաղդատաբար հանգիստ ու դիրին յաղթանակներուն, որոնք շատ հաւանաբար իր թափը կտրած էին եւ թուլցուցած իր պայքարելու ոգին, բայց եւ այնպէս ան յայտնեց, թէ այս տարի յաղթանակը շատ աւելի անուշ ու գոհացուցիչ էր, որովհետեւ միշտ 5-6 վայրկեան տարբերութեամբ տիտղոսին տիրանալը այդքան ալ հետաքրքրական չէ եւ ոչ ալ նորութիւն մըն է: Ան, սակայն, խոստացաւ յառաջիկայ տարի դարձեալ վերադառնալ եւ աւելի վճռական ըլլալով՝ տիրանալ իր 6րդ տիտղոսին: Արմսթրոնկ, նաեւ, մեծ գովասանքով արտայայտուեցաւ իր մրցակիցին՝ Եան Ուրիշի մասին, որ յաջողեցաւ իսկական հերոսի մը դերը խաղալ եւ մեծ գլխացաւ պատճառել իրեն:

Նշենք, թէ շրջավազքին աւարտին կանաչ շապիկին տիրացաւ աստրալիացի Պէյտըն Քուք, որ յաջողեցաւ 20րդ եւ վերջին հանգրուանին աւարտին 2 կէտով գերազանցել իր ազգակիցը՝ Ռոպի Մաքիվընը, որ նախքան այդ հանգրուանը ինք կը գրաւէր կէտերու դասատրման պարագլուխի դիրքը:

ՆԱՐԻՆԷ ՊՈՒԼՂՈՒԲԵԱՆ




ԱՌԱՋԻՆ ՉՈՒՑԵՐԻՒԱՑԻՆ՝ ՈՒՒՄՊՐԵԼՏԵՆԻ ԳԱԳԱԹԻՆ

Թենիսի չորս կրան շրջմի մրցաշարքերէն՝ Ուիմպլտընը միշտ ալ յատկանշական եղած է, նկատի ունենալով, որ այս մարզախաղը ծնունդ առած է Բրիտանիոյ մէջ եւ կազմաւորուած է Լոնտոնի մօտակայ Ուիմպլտըն շրջանին մէջ, ուր «All England Goquet Club»ը (հետագային «All England Goquet 8 tennis Club») թենիսի դաշտեր տրամադրելով առիթը տուած է, որ 1877ին Ուիմպլտընի մէջ տեղի ունենայ թենիսի առաջին մրցաշարքը: Այս մրցաշարքը նաեւ յատկանշական եղած է այն պատճառով, որ միշտ ալ ձեւով մը վայելած է անգլիական թագաւորական ընտանիքին հովանաւորութիւնը, ինչ որ յաւելեալ շքեղութիւն եւ վարկ շնորհելով մրցաշարքին, զանկա դարձուցած է միջազգային գետնի վրայ ընդհանրապէս ամենէն աւելի հետաքրքրութիւն շարժող թենիսի մրցաշարքը:

Այս տարի 23 Յունիսէն 6 Յուլիս տեղի ունեցաւ 117րդ Ուիմպլտընի կրան շրջմի բաց մրցաշարքը միշտ ու միշտ «All England Club»ի դաշտերուն վրայ: Այս տարուան մրցաշարքը հետաքրքրականօրէն յատկանշուեցաւ երիտասարդ թենիսիստներու եւ թենիսիստներու յաջողութեամբ, որովհետեւ թէ՛ աղջկանց եւ թէ՛ տղոց տիտղոսներուն տիրացան 21ամեայ մարզիկներ:

Արդարեւ, տղոց մրցաշարքին զուիցերիացի Ռոժէ Ֆետերեր ոչ միայն տիրացաւ տիտղոսին, այլ նաեւ հանդիսացաւ առաջին զուիցերիացին, որ Ուիմպլտընի տղոց մրցաշարքին կը հասնի աւարտականին եւ բոլոր մրցումներուն ընթացքին (7) միայն մէկ սէթ կորսնցնելով կը հանդիսանայ ախոյեան, իրագործում մը, որ մինչեւ օրս միայն հոլանտացի Ռիչըրտ Բրայչէքը կատարած էր (1996ին): Մրցաշարքին 5րդ դասուած Ֆետերեր, որ նախապէս 3 անգամ մասնակցած էր Ուիմպլտընի մրցաշարքին եւ միշտ ալ Ա. հանգրուանէն դուրս մնացած, այս տարի եկաւ փաստելու, թէ հակառակ իր երիտասարդ տարիքին պարզապէս *աուիթսայտըր* մը չէ, այլ՝ բառին բուն իմաստով «վտանգաւոր» ախոյեան մըն է, մանաւանդ որ մրցաշարքէն առաջ ան արդէն իսկ գրպանած էր 4 բաժակներ եւ 58 փուլերէն 49ն կնքած էր իր յաղթանակով:

Ֆետերեր, որ մրցաշարքին սկիզբէն իսկ հաստատ քայլերով սկսաւ յառաջանալ, իր խաղարկութեամբ եկաւ փաստելու, թէ կարողութիւնը ունի նշանաւոր եւ դժուար նկատուող մրցակիցներն իսկ 3 «մաքուր» սէ-




թերով տապալելու, իբր լաւագոյն փաստ ունենալով կիսաւարտականի եւ աւարտականի իր ճակատումները, որոնց ընթացքին ան յաջորդաբար պարտութեան մատնեց աշխարհի ամենէն աւելի արագ եւ զօրաւոր *սըրվեր* ունեցող մարզիկները՝ ամերիկացի Էնտի Ռոտիքն ու աւստրալիացի Մարք Ֆիլիփուսիսը:

Այս մէկով հանդերձ, սակայն, պէտք չէ անտեսել Մարք Ֆիլիփուսիսը, որ հակառակ աւարտականին երեք սէթերու ընթացքին Ֆետերերի սքանչելի խաղարկութեան առջեւ խոնարհելուն, կրցաւ փաստել, որ լաւ խաղացող մըն է եւ իր կամքի ուժով եւ յարատեւութեամբ շահեցաւ հանդիսատեսներուն եւ թենիսի սիրահարներուն համակրանքը: Արդարեւ, 26 տարեկան Ֆիլիփուսիս, որ ծունկը վիրաւորելով գործողութիւններու ենթարկուած էր եւ 2 տարի շարունակ հեռու մնացած թենիսի դաշտերէն, այն տպաւորութիւնը ձգած էր, որ երբեք պիտի չվերադառնայ եւ կամ վերադառնալու պարագային ալ պիտի չունենայ անցեալի իր բարձր մակարդակը, ընդհակառակն, եկաւ հակառակը փաստելու եւ վերադառնալով թենիսի աշխարհ իր առաջին մասնակցութեան իսկ հասաւ իր ասպարէզին 2րդ կրան շրջմի աւարտականին (առաջինը՝ Եու.Էս.Օփըն-1998) եւ միայն այդ հանգրուանին է, որ տեղի տուաւ անպարտելի Ֆետերերի դիմաց:

Նշենք, թէ Ֆիլիփուսիս, որ միայն 48րդ դասուած էր այս մրցաշարքին, 4րդ հանգրուանին յաջողեցաւ դուրս ձգել 2րդ դասուած եւ տիտղոսակիր Լէյթըն Հիուիթի կանուխ պարտութենէն ետք (Ա. հանգրուան) տիտղոսին գլխաւոր թեկնածուն նկատուող ամերիկացի Անտրէ Ակասին եւ աւարտականին հասնելով, իր անունը արձանագրեց աւստրալիական թենիսի պատմութեան էջերուն մէջ, երբ հանդիսացաւ 8րդ աւստրալիացին, որ կը հասնի Ուիմպլտընի աւարտականին:

Տրոյ մրցաշարքին յատկանշական էր նաեւ արժանիքնաւոր Դաւիթ Նալպանտեանի երթը, որ այս մրցաշարքին յաջորդական իր 2րդ մասնակցութիւնը բերելով լաւ խաղարկութիւն ցուցաբերեց եւ իր պայքարի ոգիով փաստեց, որ անցեալ տարի պատահմամբ չէ, որ հասած էր աւարտականին: Դժբախտաբար, սակայն, Նալպանտեան, որ այս

Ն. Պ.



ԱՌԱՋԻՆ ՉՈՒԻՑԵՐԻՒԱՑԻՆ...


Շարունակուած՝ 6րդ էջէն

տարի 6րդ դասուած էր, Գ. հանգրուանին սլովաք Քարոյ Քուչերային դէմ իր տարած դժուար յաղթանակէն ետք, Դ. հանգրուանին անգլիացի հազարաւոր համակիրներու ներկայութեան տեղի տուաւ 10րդ դասուած անգլիացի Թիմ Հէնմընի առջեւ եւ չկրցաւ շարունակել իր յաղթական երթը: Հետաքրքրական էր նաեւ հայազգի թենիսիստներու մը՝ հայաստանցի Սարգիս Սարգսեանին ելոյթը, որ իր առաջին երկու մրցումները երեք անպատասխան սէթերով ամարտելէ ետք, Գ. հանգրուանին պարտուեցաւ 3րդ դասուած սպանացի Քարլոս Ֆէրերոյէն:

Գալով աղջկանց մրցաշարքին, թենիսի սիրահարները վեցերորդ անգամ ըլլալով բախտը ունեցան հանդիսատես ըլլալու կրան շրջմի ամարտականի մը, որ իրար դէմ հանեց երկու Ուիլիըմս քոյրերը՝ Սերենան եւ Վիկտորի: Այս «տաք» ընտանեկան մթնոլորտին մէջ ի վերջոյ յաղթականը եղաւ 21 տարեկան Սերենան, որ յաջորդաբար 2րդ տարին ըլլալով քոյրը պարտութեան մատնեց եւ իր մօտ պահեց այն բաժակը, որ 2000ին եւ 2001ին պահուած էր ոչ այլ անձի, եթէ ոչ իր երեք քրոջ Վենըսի մօտ: Այս տարուան ամարտականը տարբեր էր նախորդէն, որովհետեւ մրցումին նախօրեակին այն մտավախութիւնը կար, որ Վիկտոր վիրաւոր ըլլալով չկարենայ դաշտ ներկայանալ սակայն, հակառակ ակնկալուածին, Վիկտոր ո՛չ միայն ճակատեցաւ իր կրտսեր քրոջ դէմ, այլեւ 3րդ եւ եզրափակիչ սէթ մըն ալ պարտադրեց, որոշելու համար տիտղոսակիրը:

Հետաքրքրականը այն էր, թէ հակառակ անոր որ կիսամարտականին հասնող թենիսիստները սպասուածին պէս դասուած առաջին չորս մարզիկուհիներն էին (Ուիլիըմս քոյրերը եւ պելճիքացիներ Քիմ Կլիսթըրը եւ Ծաթըն Հենեն Հարտէն), ռուս խաղացողները եկան իրենց կատարած անհերքելի իրագործումով յուշելու, թէ մօտ ապագային այս չորսը դիրութեամբ պիտի չչառաջանան մինչեւ ամարտական հանգրուանները, այլ պիտի ստիպուին այդ ճամբուն վրայ հանդիպելու ռուսական ռաքէթներուն, որոնք անխնայ պիտի հարուածեն մեծ գլխացաւ պատճառելով բոլոր թենիսիստներուն, անխտի՛ր: Արդարեւ, այս տարի 5 ռուս մարզիկուհիներ հասան 1 - 16րդ հանգրուան եւ հակառակ անոր, որ անոնցմէ միայն մէկը անցաւ քառորդ ամարտականին, անոնք եկան փաստելու, որ վտանգաւոր *աութսայտ*ներ են եւ որեւէ վայրկեան կրնան բոլոր խաղաքարտերը վերադասաւորել ի վնաս ամերիկացի եւ պելճիքացի աստղերուն: Մատնանշումի արժանի էր նաեւ ճափոնցիներ Այի Սուկիյամայի եւ Թինպու Ասակէօյի վերջին 16ին մէջ գտնուիլը, ինչ որ շատ լաւ իրագործում մըն է ճափոնական թենիսիստ համար:

Ինչ կը վերաբերի զոյգի մրցումներուն, պելճիքացի Քիմ Կլիսթըրը առիթը ունեցաւ անհատական մրցումներու կիսամարտականին իր կրած պարտութիւնը մոռցնելու, երբ իր զոյգին Այի Սուկիյամայի հետ պարտու-



թեան մատնեց թի 1 դասուած Վըրճիմիա Ռուանօ Փասքուալ (Սպանիա), Փաուլա Սուարէզ (Արժանթին) զոյգը եւ տիրացաւ տիտղոսին, մինչ տղոց զոյգերու մրցաշարքը եկաւ նոր տիտղոս մը անելցնելու ամարտականի Թոտ Վուտպրիճի հարուստ հաւաքածոյին վրայ: Արդ, Վուտպրիճ իր խաղընկերոջ շուէտացի Եոնաս Պիորքմանի հետ յաջորդաբար 2րդ տարին ըլլալով բաժակը խլեց եւ արժանացաւ Ուիմպլտընի զոյգերու մրցաշարքի իր 8րդ բաժակին, այսպիսով հաւասարելով Հիւ եւ Ռեճի Տոհրթի եղբայրներուն հաստատած մրցանիշին: Վուտպրիճ, որ նախկին վեց Ուիմպլտընի բաժակները շահած էր այլ ամարտականի մը՝ Մարք Վուտֆորտի օգնութեամբ, տիրացաւ իր ասպարէզին 76րդ զոյգի բաժակին եւ անելի եւս մօտեցաւ Թոմ Օքլըրի մրցանիշին, որ 78 զոյգերու տիտղոսներով կը պահէ մրցանիշը:

Վերջապէս, մրցաշարքին ամենէն հետաքրքրական եւ պատմական իրագործումը կատարեց վեթերան թենիսիստ Մարթինա Նաւրաթիլովա, որ իր 46 տարեկան յառաջացած տարիքին յաջողեցաւ իր մասնակցութիւնը բերել աղջկանց զոյգերու ինչպէս նաեւ խառն զոյգերու մրցաշարքերուն: Աւելի հետաքրքրականը այն էր, որ Նաւրաթիլովա խառն զոյգերու մրցաշարքին իր խաղընկերոջ՝ հնդկ Լէնտըր Փէյսի աջակցութեամբ յառաջացաւ մինչեւ ամարտական եւ Էնտի Ռեմ (Իսրայէլ) Անասթազիա Ռոտիոնովա (Ռուսիա) զոյգը պարտութեան մատնելով տիրացաւ Ուիմպլտընի իր 20րդ բաժակին (ոչ միայն զոյգերու): Ծագումով չեխ Նաւրաթիլովա այսպիսով հաւասարեցաւ թենիսի այլ առասպելի մը՝ Պիլի Ծան Քիմկի հաստատած պատմական մրցանիշին եւ այսպիսով սքանչելի եւ անմոռանալի վերջ մը շնորհեց 117րդ Ուիմպլտընի մրցաշարքին:

100ՐԴ ԹՈՒՐ ՏԸ ՖՐԱՆՍԸ ԿԸ ՏՊԱԻՈՐԷ

Շարունակուած՝ 5րդ էջէն

Ինչ կը վերաբերի ապահովութեան, այս տարի անելի քան 20,000 ոստիկաններ կը հսկէին *Թուր Տը Ֆրանսի* ճամբաներուն, խումբերու կայաններուն ու հանգիստի վայրերուն, որեւէ անախորժ դէպքի առաջը առնելու համար, նկատի ունենալով, որ մօտ 15 միլիոն ֆրանսացիներ եւ օտարականներ եկած էին մօտէն հետեւելու շրջավազքին մասնակցող 198 հեծելանորդներուն, որոնց մեծ մասը յաջողեցաւ երեք շաբաթ տեւողութեամբ օրական մարաթոններէ ետք, 3427,5 քմ. երկարող այս շրջավազքը ամարտել, ինչ որ ինքնին հերոսութիւն մըն է եւ հեծելարշաւի աշխարհին համար ալ՝ յաղթանակ մը:

Գալով խթանիչ դեղերու հարցին, ֆրանսական «Լէօ Քանար Անշէն» երգիծական շաբաթաթերթը նշեց, թէ այս տարի կազմակերպիչները 100ամեակը յաջողութեամբ բոլորելու համար պէտք եղած չափով չէին հետապնդած խթանիչ դեղերու գործածութիւնը եւ այնքան թոյլ գտնուած էին, որ այս տարի այդ դեղերը կարելի էր գտնել ոչ թէ միայն բժշկական քննութիւններու իբր արդիւնք՝ հեծելանորդներու արեան մէջ, այլ՝ խումբերուն ինքնաշարժներուն եւ կայաններուն մէջ իսկ:

Ծիշոյ է, որ «Լէօ Քանար Անշէն» այդ լուրը փոխանցած էր երգիծական ռոմպ եւ որոշ չափազանցութեամբ, բայց յստակօրէն առանց կրակի մոխի չըլլար եւ հետեւաբար երգիծական կարծուած այդ յայտարարութեան մէջ կրնայ որոշ չափի իրականութիւն մը ըլլալ: Նշենք, թէ 1998ի *Թուր Տը Ֆրանսը* մեծ հարուած մը ստացած էր, երբ խթանիչ դեղերու գայթակղութիւն մը յայտնաբերուած էր, իսկ այս տարուան փոխախոյնեանը՝ Ուլրիշ անցեալ տարի *Թուր Տը Ֆրանսի*ն չէր մասնակցած, որովհետեւ խթանիչ դեղեր գործածելով 6 ամիս կախակայուած էր հեծելարշաւի միջազգային ֆետերասիոնին կողմէ:

Յամենայնդէպս, ինչ ալ ըլլան պայմանները, կարելի չէ հերքել այն փաստը, թէ այս տարուան *Թուր Տը Ֆրանսը* 100ամեակի արժանի մթնոլորտ մը ապրեցաւ եւ յաջողեցաւ դարձեալ կախարդել հեծելարշաւի սիրահարները: Անկկա 100 տարուան ընթացքին կտրած եղաւ անելի քան 300,000 քմ., այսինքն՝ մօտաւորապէս Փարիզէն լուսին հեռաւորութիւնը եւ այսպիսով լուսարձակները իր վրայ կեդրոնացնելով իր փառքով ալ բարձրացաւ մինչեւ լուսին:

«ՆԱԻԱՍԱՐԴ»Ի ԶՐՈՅՑԸ ԱՇԽԱՐՀԱՆՌՉԱԿ ՄԱՐԶԻՉ ՌԵՄՈՆ...

Շարունակում է Ա. Էջեն

Հայագրի մարզիչը իր կարճատև այցելության ընթացքին հանդիպեցաւ Լիբանանի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարար Սեպուհ Յովնանեանի, ինչպէս նաեւ լիբանանեան ֆութպոլի շարք մը պատասխանատուներու հետ: Ան նաեւ հիօրը եղաւ «Նաւասարդ»ի, խօսելով իր հարուստ փորձառութեան մասին: 69ամեայ մարզիչին հետ մեր ունեցած գրոյցը յապատումներով կը ներկայացնենք ստորեւ:

«ՆԱԻԱՍԱՐԴ».- Աւելի քան քառասուն տարիներու վրայ երկարող մարզիչի ձեր ասպարէզը հարուստ եղած է նուաճումներով եւ շրջագայութիւններով, որոնք ձեզ տարած են Քանատա, Ափրիկեան երկիրներ, արաբական աշխարհ: Խօսինք ձեր փորձառութիւններուն մասին:

«ԶԱՐՓԱ».- Մարզիչի ասպարէզս սկսած եմ Ֆրանսայի մէջ եւ ամբողջ 30 տարիներ (1962-1992) մարզած եմ բազմաթիւ ակումբներ, տիրացած ախոյեանութիւններու: Այս ընթացքին նաեւ մարզած եմ Ֆրանսայի կրտսերներու եւ ոչ-արհեստավարժներու հաւաքականներ եւ իբրեւ թեքնիք խորհրդատու մաս կազմած եմ ֆրանսական ֆութպոլի ֆետերասիոնի շարք մը մարմիններու:

1993-1994ին պաշտօնավարած եմ իբրեւ Սիերա Լեոնի հաւաքականի թեքնիք պատասխանատու: Կազմը հասած է ափրիկեան երկիրներու բաժակի աւարտական փուլ:


1996-1997ին մարզած եմ Պուրքինա Ֆասոյի Ա. Էս. Էֆ. Պէ. կազմը, որուն հետ տիրացած եմ երկրի փոխ-ախոյեանի եւ բաժակակիրի տիտղոսին: 2000ին իբրեւ թեքնիք խորհրդատու աշխատած եմ Քանալ փլիս հորիզոնի հետ:

2001-2002ին Ժան Քլոտ Լաֆարկի հետ (17 տարեկաններու Ֆրանսայի հաւաքական մարզիչ, 2001ին աշխարհի ախոյեան) ուղղուած եմ Քանատա, ուր փոխանցած եմ մարզիչներու պատրաստութեան դասընթացքներ:

2002ին մարզած եմ նաեւ Սէուտական Արաբիոյ «Ալ Անսար» խումբը:

«Ն».- Մեկնելով ձեր այս փորձառութիւններէն՝ ըլլան անոնք ոչ-արհեստավարժ թէ արհեստավարժ մակարդակի խումբերու հետ, ի՞նչ կրնաք ըսել անոնց միջեւ եղած տարբերութիւններուն մասին:

«Զ».- Հետաքրքրական հարցում է: Նախ պէտք է շեշտել, որ արհեստավարժ ֆութպոլիստին համար մարզումը գործ է, աշխատանք է: Ան պէտք է փորձերուն ներկայ գտնուի ճիշդ ժամերուն, յաճախ օրը երկու անգամ եւ հետեւի իր պայմանագիրին մէջ նշուած կանոններուն: Ոչ-արհեստավարժ ֆութպոլիստը սակայն յաճախ կրնայ ուշ ներկայանալ փորձի, պատճառաբանելով, որ գործ ունէր կամ զաւակը դպրոցէն տուն կը բերէր...:



«Ն».- Իսկ ի՞նչ տարբերութիւն գտաք եւրոպական եւ ափրիկեան ֆութպոլի խումբերու միջեւ:

«Զ».- Տարբերութիւններէն գլխաւորը խմբային խաղարկութեան եւ վարչական-կազմակերպչական կառոյցներու կը վերաբերի: Ափրիկեան խումբերու ֆութպոլիստները ունին տաղանդը, սակայն իրենց «գլուխը առնելով» կը վազեն գնդակին ետեւէն: «Տիսիփլին»ի պակաս մը կայ: Երբ ես եւրոպացի ֆութպոլիստին կ'ըսեմ, թէ պէտք է խաղայ յետասպան գիծին վրայ, կարիքը չեմ զգար շեշտելու, թէ իր դիրքը լքելով անհարկի կերպով պէտք չէ յառաջանայ:

Կացութիւնը նոյնը չէ ափրիկեան խումբերու հետ, ուր նախ «տիսիփլին» ստեղծելու կարիքը զգացած եմ:

«Ն».- Ի՞նչ էր Լիբանանի ձեր այցելութեան պատճառը:

«Զ».- Ես այստեղ հիւրն եմ իմ հովանաւորութեանս տակ գործող միջազգային 200 մարզիչներէն մէկուն՝ Լիբանանեան ծագում ունեցող Պասսամ Զպիպի հետ: Այցելութիւնս օդափոխութեան համար էր, սակայն առիթը ունեցանք նաեւ այցելութիւններ տալու մարզական նախարարին եւ ֆութպոլի պատասխանատուներու:

«Ն».- Հայերէն լեզուն կը խօսիք համեմատաբար լաւ: Մամուլի մէջ ձեր հարցազրոյցներուն մէջ տեսաբար կը յիշէք ու կը շեշտէք թէ հայ էք...

«Զ».- Այո՛: Մի՛շտ: Առանց վարանելու: Այդ իմ ժողովուրդիս համար է, մօրս եւ հօրս յիշատակին համար է: Ինձի համար մեծ հպարտութիւն է հայ ըլլալը եւ ուրախութիւն՝ հայերու հետ հանդիպիլը աշխարհի տարբեր երկիրներու մէջ:

